139 Գ., էջ 430:
140 Տե՛ս հետաքրքրական, բայց ոչ համապարփակ եւ կամայական մեկնագրութիւնը՝ Պ. Սեւակ, *Երկեր, Վարուժանի պոէզիան*, հտ. Գ, Երեւան, 1983, էջ 471-550:
141 Տե՛ս հմտալից, բայց ոչ լման դասախօսութիւնը՝ Հ. Լ. Զէքիեան, *Դանիէլ Վարուժան բանաստեղծ եւ արուեստագէտ*, «Բազմավէպ», 1984, էջ 10-25:
142 Տե՛ս շահեկան, բայց անկատար յօդուածը՝ Սիլվա Յովհաննիսեան, Գեղագիտական իտէալի վարուժանեան ըմբռնումները, «Ազդակ», Պէյրութ, 16 Դեկտեմբեր, 1996, էջ 5բ-դ:
143 Բարեացակամ եւ ազնուախոհ խորհրդատու Դ. Վարուժանի խրատին հաւանաբար անսալով՝ Ս. Երէցեան լոյս չընծայեց իր քերթուածներուն հաւաքածոն:
144 Գ., էջ 435-436:
145 Տե՛ս Ս. Զ. Գրիգորեան, *Գինու երգը ըստ Դանիէլ Վարուժանի եւ Վահագն Դաւթեանի*, «Բանբեր Երեւանի Համալսարանի», թիւ 3 (81), 1993, էջ 173-182:
146 Գ., էջ 456-457:
147 Գ., էջ 446:
148 Գ., էջ 413:
149 Գ., էջ 445:
150 Գ., էջ 459:
151 Գ., էջ 277:
152 Գ., էջ 328:
153 «Դանիէլ Վարուժան, Երկերի լիակատար ժողովածուի» երրորդ հատորին մէջ՝ «Բնագրերում յիշատակուած պարբերականներ» վերտառութեան տակ, 40 անուններ կան (Գ., էջ 707-708):
154 «Գեղարուեստ» գրական, գեղարուեստական, երաժշտական, նկարազարդ հանդէս է՝ հրատարակուած Թիֆլիսի մէջ, 1908-1909, 1911, 1913, 1917 եւ 1921: Խմբագիր-հրատարակիչն էր Գ. Լեւոնեան (տե՛ս Մ. Ա. Բաբլոյեան, *Հայ պարբերական մամուլը*, Մատենագիտական համահաւաք ցուցակ (1794-1980), Երեւան, 1986, էջ 70բ, թիւ 463):
155 Դ. Վարուժան ղրկեց «...Ո՛վ Լալագէ» քերթուածը, զոր երկնեց 28 Հոկտեմբեր 1910-ին: Տպուեցաւ «Գեղարուեստ»-ի մէջ (1911, թիւ 4, էջ 94-96):
156 Գ., էջ 438:
157 Հմմտ. Գ., էջ 455:
158 Գ., էջ 457:
159 «Ծանթ» գրական ու գեղարուեստական հանդէս է՝ հրատարակուած Կ. Պոլիս, 1911-1915 եւ 1918-1919: Արտօնատէր-խմբագիրն էր Մ. Պարսամեան (տե՛ս Մ. Ա. Բաբլոյեան, անդ, էջ 90ա, թիւ 668):
160 «Ատրուշան» ծածկանունը կը գործածէր Հ. Սիմոն Վրդ. Երեմեան, որուն մասին տե՛ս Ասատուր Փաշայեան, *Սիմոն Երեմեանի գիտական եւ գրական ժառանգութիւնը*, ՊԲՀ, թիւ 3 (167), Երեւան, 2004, էջ 131-147:
161 Գ., էջ 444 եւ տե՛ս էջ 448:
162 «Հայ գրականութիւն» գրական, գիտական ու գեղարուեստական ամսօրեայ հանդէս է՝ հրատարակուած Զմիւռնիայի մէջ, 1911-1914: Հիմնադիր-խմբագիրն էր Զ. Գազազեան (տե՛ս Մ. Ա. Բաբլոյեան, անդ, էջ 88բ-89ա, թիւ 656):
163 Գ., էջ 458:
164 Տե՛ս Գ., էջ 402-403 եւ 461:
165 «Դանիէլ Վարուժանէն իր սիրելի բարեկամին՝ Թէոդիկին ողջո՛յն, պարտական եմ քեզի, սիրելիս, պարտական եմ խօսքեր, զոր երկար ժամանակ պահեցի սրտիս մէջ եւ պատառ մը թուղթ չգտայ կարծես զանոնք ծրարելու համար» (Գ., էջ 449, նամակ, «15 Մայիս, 1912, Թոգաթ»):
166 Այս գրական, պատմական ու գիտական տարեգիրքը լոյս տեսաւ Կ. Պոլիս, 1907-1923, Փարիզ, 1924, Վիեննա, 1925, Վենետիկ, 1926 եւ Փարիզ, 1927-1929 (տես Մ. Ա. Բաբլոյեան, անդ, էջ 66ա, թիւ 412):
167 Գ., էջ 423 եւ *Ամէնուն տարեցոյցը*, Կ. Պոլիս, 1911, էջ 3:
168 Գ., *էջ 439 եւ Ամէնուն տարեցոյցը*, Կ. Պոլիս, 1912, էջ 6:
169 Այս վերտառութեամբ՝ Պոլիս, 1912-ի սկիզբը, Թէոդիկ հրատարակեց իր արձակ գրութիւններուն հաւաքածոն:
170 Գ., էջ 445 եւ *Ամէնուն տարեցոյցը*, Կ. Պոլիս, 1913, էջ 5:
171 Գ., էջ 466 եւ *Ամէնուն տարեցոյցը*, Կ. Պոլիս, 1916-1920, էջ 9:
172 Վ. Գաբրիէլեան, անդ, էջ 98-99:
173 Գ., էջ 464:
174 Հ. Ե. Տէր-Ղազարեան, անդ, էջ 56, թիւ 393:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 1912-1921 ԹԹ.

Սամուէլ Պօղոսեան

1912-1921 թուականները Հայոց պատմութեան բարդ ու հակասական ժամանակաշրջանն է. մեր ժողովուրդը իր մեծ երազանքների ճանապարհին ունեցաւ խոշոր վայրիվերումներ, անցաւ Եղեռնի գողգոթայով, ձեռք բերեց անկախութիւն եւ անմիջապէս էլ կորցրեց այն՝ ապրելով դառն յուսախաբութիւններ:

Այս դժուարին շրջանում Հայ ազգային պատուիրակութեան ղեկավարն էր եգիպտահայ մեծահարուստ եւ բարերար Պօղոս Նուպար փաշան (1851-1930), որը եւրոպական տէրութիւնների առջեւ փորձում էր պաշտպանել Հայկական հարցն ու հայութեան շահերը:

1912 թ. նոյեմբերի 10-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ի կոնդակով[1] Պօղոս Նուպար փաշան նշանակուեց եւրոպական տէրութիւններում Կաթողիկոսի լիազօր եւ պէտք է բարձրացնէր Հայկական հարցը: Այնուհետեւ մինչեւ 1921 թ. Պ. Նուպարի գործունէութիւնն ու ծրագրերն անմիջականօրէն կապուեցին Հայկական հարցի պատմութեան հետ: Փորձութիւններով լի այդ ժամանակաշրջանում հայութեան առջեւ դրուած խնդիրները եւ Պ. Նուպարի ծրագրերը փոփոխութեան էին ենթարկւում միջազգային իրավիճակն համապատասխան՝ բարենորոգումների համեստ պահանջներից վերածուելով «ծովից ծով» հայկական անկախ պետութիւն կազմելու երազանքի:

Պ. Նուպարը համազգային, համամարդկային չափանիշների գործիչ էր, որը պատիւ կը բերէր ամէն ազգի. եւրոպական կրթութեամբ, լայն մտահորիզոնի տէր անձ, անսահման հայրենասէր եւ բարեգործ, անխոնջ, անյոգնաբեկ ազգային գործիչ, ճանաչուած ֆինանսական, քաղաքական եւ մտաւորական շրջաններում: Նա Հայկական հարցի յաջողութեան համար ներդրեց իր հարստութիւնն ու ազդեցութիւնը, լեզուն ու գրիչը: Ազգային պատուիրակութեան նախագահի պաշտօնը ստանձնելուց յետոյ նա դարձաւ ամենաժողովրդական հայը: Երուանդ Օտեանը գրում է. «Ալ լոկ հարուստ բարերար մը ըլլալէ դադրեցաւ անիկա ու դարձաւ յուսոյ փարոս մը, դէպի ուր ուղղուեցան ամէնուն աչքերը»[2]:

Պ. Նուպարը սկզբնական շրջանում հանդէս էր գալիս Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու աւելի համեստ պահանջներով: Նրա ծրագիրը բխում էր 1878 թ. Բեռլինի պայմանագրի 61-րդ յօդուածի[3] եւ 1895 թ. Մայիսեան բարենորոգումների նախագծի[4] սկզբունքներից: Ըստ դրանց՝ հայկական վեց նահանգները (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբէքիր, Սեբաստիա) միաւորուելու էին մէկ երկրամասի մէջ, ուր թրքական կառավարութիւնը նշանակելու էր ընդհանուր կառավարիչ, որին կից նշանակուելու էին եւրոպացի խորհրդականներ՝ լայն լիազօրութիւններով: Այդ վարչութեան վերահսկողութեամբ վերակազմուելու էին ոստիկանութիւնը եւ դատարանները, բարեփոխուելու էր հարկային եւ ֆինանսական համակարգը, ետ էին վերադարձուելու հայերից գրաւուած հողերը, կառուցուելու էին ճանապարհներ, որի հետեւանքով երկրամասում կը հաստատուէր համեմատական ապահովութիւն եւ արդարութիւն, կը բարելաւուէր տնտեսական

© National Library of Armenia

դրութիւնը: Իսկ եւրոպական վեց տէրութիւնների ներկայացուցիչներից կազմուած յանձնաժողովը հսկելու էր բարենորոգումների իրականացման ընթացքը[5]:

Նա ձգտում էր Արեւմտեան Հայաստանում վերացնել անիշխանութիւնը, հայերի համար ձեռք բերել կեանքի, գոյքի ու պատուի ապահովութիւն: Միաժամանակ Ազգային պատուիրակութեան նախագահը փորձում էր բարենորոգումների օգուտները բացատրել Թրքական կողմին՝ գիտակցելով, որ առանց Թուրքերի համաձայնութեան ոչ մի բարենորոգում էլ չէր իրականացուելու: Նա պնդում էր բարենորոգումների հարցում եւրոպական վերահսկողութեան վրայ, քանի որ, ինչպէս պատմութիւնն էր ցոյց տուել, Օսմանեան կայսրութիւնում առանց արտաքին հսկողութեան բարենորոգումները չէին գործադրւում կամ էլ կիսատ էին մնում[6]:

Բարենորոգումների ծրագիր կազմեց նաեւ Կ. Պոլսի Ապահովութեան խորհուրդը[7] եւ ուղարկեց Պ. Նուպարին: Պարզուեց, սակայն, որ էական տարբերութիւններ կային վերջինիս եւ Կ. Պոլսի ծրագրերում, որում ուրուագծւում էր ապագայ ինքնավար Հայաստանի հեռանկարը: Սակայն Պ. Նուպարը վաղաժամ եւ անիրագործելի էր համարում այդ ծրագիրը:

Միասնական ծրագիր կազմելու համար Կ. Պոլսից Փարիզ մեկնեց Ապահովութեան խորհրդի քարտուղար, դաշնակցական գործիչ Վահան Փափազեանը (Կոմս): Երկարատեւ բանակցութիւններից յետոյ (1913-ի փետրուար-մարտ), ի վերջոյ, կայացուեց համաձայնութիւն, ըստ որի հայկական վեց վիլայէթները միաւորուելու էին մէկ երկրամասի մէջ, որից դուրս էին թողնելու մահմեդականներով բնակեցուած ծայրամասային որոշ շրջաններ, սուլթանը տէրութիւնների համաձայնութեամբ նշանակելու էր եւրոպացի ընդհանուր կառավարիչ, որն ունենալու էր լայն լիազօրութիւններ, իսկ տեղական խորհուրդներում եւ պաշտօններում քրիստոնեաներն ու մահմեդականները ստանալու էին հաւասար տեղեր:

Այդ ծրագիրն ուղարկուեց Պետերբուրգ՝ ռուսական կառավարութեան հաւանութիւնը ստանալու, որից յետոյ պաշտօնապէս ներկայացուելու էր միւս տէրութիւններին[8]: Սակայն ռուսական կողմը որոշեց իր ձեռքն առնել նախաձեռնութիւնը եւ բարենորոգումների ծրագիրը պաշտօնապէս ներկայացրեց տէրութիւնների քննարկմանը: Պ. Նուպարի եւ Պատրիարքարանի կազմած ծրագիրը Կ. Պոլսի ռուսական դեսպան Մաքսիմ Գիրսի յանձնարարութեամբ դեսպանատան առաջին թարգման Անդրէյ Մանդելշտամը աննշան փոփոխութիւնների ենթարկեց[9], եւ այն վեց տէրութիւնների ներկայացուցիչների կողմից 1913 թ. յուլիսի 3-23-ը քննարկուեց Ենի Քէոյում՝ Կ. Պոլսի աւստրո-հունգարական դեսպանատանը: Սակայն բանակցութիւնները արդիւնք չունեցան ռուս-գերմանական հակասութիւնների հետեւանքով: Ռուսաստանին քիչ թէ շատ աջակցում էին Անգլիան եւ Ֆրանսիան, Գերմանիային՝ Իտալիան եւ Աւստրո-Հունգարիան:

Հայկական հարցը յայտնուեց մեծ տէրութիւնների շահերի հակասութեան ոլորտում, եւ վտանգ կար, որ կրկին լուծում չի ստանայ: Երկարատեւ դիւանագիտական պայքարից եւ բանակցութիւններից յետոյ, որում մեծ էր նաեւ Հայ ազգային պատուիրակութեան նախագահի դերը, 1914 թ. յունուարի 26-ին կնքուեց ռուս-թրքական համաձայնագիր Հայկական բարենորոգումների վերաբերեալ[10]:

Այդ համաձայնագրով Արեւմտեան Հայաստանը բաժանուելու էր երկու նահանգների. առաջին՝ Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբէքիր, եւ երկրորդ՝ Էրզրում, Սեբաստիա, Տրապիզոն: Ինչպէս տեսնում

ենք, հայկական տարածքներին միացուած էր գլխաւորապէս մահմեդականներով բնակեցուած Տրապիզոնի վիլայէթը, որով արհեստականօրէն ստեղծւում էր մահմեդական մեծամասնութիւն: Տէրութիւնների առաջարկած թեկնածուներից սուլթանը 10 տարով նշանակելու էր ընդհանուր կառավարիչներ՝ լայն լիազօրութիւններով: Նրանք լուծելու էին հողային հարցերը, նրանց էին ենթարկուելու վարչական, դատական, ոստիկանական իշխանութիւնները: Օրէնքները հրապարակուելու էին տեղական լեզուներով, բիւջէից լուսաւորութեան համար ազգային համայնքներին յատկացուելու էր այնքան գումար, որքան նրանք այդ նպատակով հարկ կը մուծէին: Զինակոչիկները ծառայելու էին նահանգների տարածքում: Վանի, Բիթլիսի, Էրզրումի ընդհանուր խորհուրդներում քրիստոնեաները եւ մահմեդականները ստանալու էին հաւասար տեղեր, միւս նահանգներում կիրառուելու էր համեմատական սկզբունքը, իսկ վարչական խորհուրդներում եւ պաշտօններում կիրառուելու էր հաւասարութեան սկզբունքը:

Այսպիսով, Ազգային պատուիրակութեան եւ ռուսական կառավարութեան երկարատեւ ու յամառ ջանքերի շնորհիւ Թուրքերից կորզուեց բարենորոգումների բաւական համեստ յաւակնութիւններով համաձայնագիր: Չնայած դրա սկզբունքները չէին համապատասխանում բարենորոգումների վերաբերեալ հայկական կողմի սկզբնական պատկերացումներին, սակայն այն, այնուհանդերձ, որոշ բարելաւումների յոյս էր ներշնչում: Պէտք է նշել, որ Պ. Նուպարը, ծանօթ լինելով Թրքական իշխանութիւնների բարքերին ու գործելակերպին, վստահ չէր, որ համաձայնագրի կէտերը կը գործադրուեն, եւ ջանք չխնայեց, որպէսզի Թուրքերին համոզի դրանց օգտակարութիւնը Օսմանեան կայսրութեան համար:

Սակայն Թուրքերը խախտեցին նաեւ այդ համաձայնագիրը եւ ընդհանուր կառավարիչների հետ մայիսի 10-ին կնքած պայմանագրերով խիստ սահմանափակեցին վերջիններիս իրաւունքները[11]:

Պ. Նուպարը յունուարի 26-ի համաձայնագրի խախտման առթիւ բողոքեց Գերմանիայի եւ Ֆրանսիայի կառավարութիւններին, իսկ յունիսի 13-ին Պետերբուրգում հանդիպեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Ս. Սազոնովի հետ[12]: Ռուսական կառավարութեանն ուղղուած յուշագրում Ազգային պատուիրակութեան նախագահը խիստ քննադատութեան ենթարկեց միջազգային իրաւունքի նորմերի՝ Թուրքերի ոտնայարման փաստը[13]:

Սակայն նրա ջանքերն ու յոյսերը իզուր էին...

1914 թ. օգոստոսին սկսուեց Առաջին աշխարհամարտը, որը նոր արհաւիրքներ էր նախապատրաստել հայ ժողովրդի համար: Թրքական իշխանութիւնները մի կողմ դրեցին բարենորոգումների համաձայնագիրը եւ որոշեցին Հայկական հարցը լուծել՝ բնաջնջելով հայ ժողովրդին:

Ազգային քաղաքական շրջանակներում դեռ անորոշ յոյս էին տածում, որ պատերազմից յետոյ Արեւմտեան Հայաստանին եւ Կիլիկիային ինքնավարութիւն կը տրուի: Այդ հարցով Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ V Սուրէնեանցը դիմեց Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովին[14] եւ Նիկոլայ II ցարին[15]:

Իսկ 1915 թ. փետրուարին Պ. Նուպարը «Պատերազմը եւ Կիլիկիայի հայերը» խորագրով յուշագիր[16] ներկայացրեց Եգիպտոսի անգլիական իշխանութիւններին, ուր պահանջում էր պատերազմից յետոյ ինքնավարութիւն շնորհել Հայաստանին ու Կիլիկիային: Այդ յուշագրով Պ. Նուպարը առաջ էր քաշում Կիլիկիայում Անտանտի երկրների զօրքեր ուղարկելու հարցը

© National Library of Armenia

եւ խոստանում էր, որ Կիլիկիահայերը կ'ապստամբեն եւ կարճ ժամանակում երկրամասը կ'ազատագրեն Թուրքերից: Դա բաւական խորաթափանց դիւանագիտական առաջարկ էր, քանի որ դրանով Կիլիկիայի հայերը ոչ միայն կը խուսափէին կոտորածներից ու տեղահանութիւնից, այլեւ իրաւունք կը ստանային պատերազմից յետոյ ինքնավարութիւն պահանջել՝ որպէս կռուող կողմ:

1915 թ. գարնանից երիտթուրք ջարդարարները սկսեցին հայերի զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները: 1915 թ. ապրիլի 16-ին Թիֆլիսի Ազգային բիւրօն դիմեց Կաթողիկոսին՝ Պ. Նուպարին ուղարկելու Եւրոպա, որպէսզի չէզոք երկրների ուշադրութիւնը հրաւիրի հայկական կոտորածների վրայ, եւ դրանք դադարեցնելու միջոցներ ձեռնարկուեն[17]: Ապրիլի 28-ին Կաթողիկոսը կոնդակ ուղարկեց Պ. Նուպարին՝ նրան լիազօրելով անմիջապէս մեկնել Եւրոպա եւ դիմումներ կատարել չէզոք պետութիւններին, որպէսզի նրանց միջնորդութեամբ դադարեցուեն հայկական կոտորածները, ինչպէս նաեւ աշխատանքներ տանի Հայաստանի ինքնավարութեան համար[18]:

Մայիսի 9-ին Ազգային պատուիրակութեան նախագահը ժամանեց Փարիզ, ուր Ազգային բիւրոյի ներկայացուցիչ, նշանաւոր հասարակական-քաղաքական գործիչ Յակոբ Զաւրեանի հետ կազմեց Հայաստանի ինքնավարութեան ծրագիր: Այդ ծրագրով ստեղծուելու էր ինքնավար Հայաստան՝ սուլթանի անուանական գերիշխանութեան ներքոյ ու եւրոպացի գեներալ-նահանգապետի գլխաւորութեամբ: Հայաստանը գտնուելու էր Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսիայի խնամակալութեան ներքոյ: Ինքնավար Հայաստանը ընդգրկելու էր Արեւմտեան Հայաստանի վեց նահանգները եւ Կիլիկիան՝ Մերսին նաւահանգստով, իսկ Ալեքսանդրէթը դուրս էր մնալու, որպէսզի խուսափեն Անգլիայի ու Ֆրանսիայի ընդդիմութիւնից[19]:

Ինչպէս տեսնում ենք, դեռեւս անկախ Հայաստանի մասին խօսք չկար, այլ միայն նախատեսւում էր ինքնավարութիւն ձեռք բերել սուլթանի անուանական գերիշխանութեան եւ տէրութիւնների հովանու ներքոյ: Դրանից աւելին պահանջել տուեալ պարագայում անիրագործելի էր, եւ Պ. Նուպարը ճիշտ էր ըմբռնել միջազգային իրադրութիւնը:

Յ. Զաւրեանը տեղեկացրեց Պ. Նուպարին, որ Ֆրանսիան եւ Ռուսաստանը գաղտնի համաձայնութիւն են կնքել, որով յաղթանակից յետոյ Արեւմտեան Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, իսկ Կիլիկիան՝ Ֆրանսիային, սակայն ցարական կառավարութիւնը զղջացել էր եւ հայերին հրահրում էր պահանջել Կիլիկիան՝ խոստանալով ինքնավարութիւն տալ[20]: Դրանից ելնելով էլ Ազգային պատուիրակութիւնը Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքական շրջաններին ներկայացրեց միացեալ եւ ինքնավար Հայաստանի նախագիծը: Պ. Նուպարը, յենուելով Եւրոպայի քաղաքական ու ֆինանսական աշխարհում իր ունեցած կապերի վրայ, ընդարձակ լոբբիստական աշխատանքներ ծաւալեց:

Տէրութիւնների ներկայացուցիչները, չնայած հայ գործիչների հետ հանդիպումների ժամանակ դրական էին արտայայտւում Հայաստանի ինքնավարութեան ծրագրի կապակցութեամբ, սակայն հարցի լուծումը կապում էին պատերազմի աւարտի հետ եւ խուսափում էին այդ առթիւ պաշտօնական յայտարարութիւններ անելուց: Նրանց շահերի բախումը թոյլ չէր տալիս որոշակի խոստումներ տալ, մանաւանդ՝ Հայաստանի ապագայի վերաբերեալ իրենք այլ ծրագրեր ունէին:

1916 թ. մայիսին Սայքս-Պիկօ-Սազոնով պայմանագրով Անգլիան, Ֆրանսիան

եւ Ռուսաստանը գաղտնի համաձայնութիւն կնքեցին պատերազմից յետոյ Օսմանեան կայսրութեան մասնատման վերաբերեալ: Հայաստանը բաժանուելու էր երկու մասի. Ռուսաստանին էին անցնելու Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայէթները, իսկ Ֆրանսիային՝ Սեբաստիան, Դիարբէքիրը, Խարբերդը եւ Կիլիկիան:

Ցարական կառավարութիւնը ոչ միայն ետ կանգնեց պատերազմի սկզբում հայերին տուած խոստումներից, այլեւ որոշեց իր գրաւած հայկական նահանգներում բնակեցնել ռուս եւ կազակ վերաբնակիչներին, իսկ հայ գաղթականներին արգելեց վերադառնալ իրենց օջախները: Ռուսաստանի տմարդի քաղաքականութիւնը, որի հետ այնքան մեծ յոյսեր էին կապուած, խոր հիասթափութիւն էր հայ ժողովրդի համար:

Ակնյայտ դարձաւ, որ միացեալ Հայաստանի ստեղծման գաղափարը դատապարտուած էր անյաջողութեան: Այս պայմաններում Պ. Նուպարը որդեգրեց նոր քաղաքականութիւն՝ ինքնավար Հայաստան՝ Ռուսաստանի եւ ինքնավար Կիլիկիա՝ Ֆրանսիայի հովանու տակ:

Պ. Նուպարը Ֆրանսիային անցնելիք հայկական տարածքներին ինքնավարութիւն տալու հարցը դիտեց գլխաւոր պայման, երբ Ֆրանսիան նրան առաջարկեց ստեղծել Հայկական լեգէոնը: Ֆրանսիացի քաղաքական գործիչները խոստացան ինքնավարութիւն տալ Կիլիկիային[21], սակայն այդ մասին պաշտօնական յայտարարութիւն անելուց տարբեր պատրուակներով խուսափեցին՝ չնայած Պ. Նուպարի բազմաթիւ դիմումներին ու բողոքներին: Ինչպէս ապագան ցոյց տուեց, Ֆրանսիան իրականում մտադրութիւն չունէր Կիլիկիային ինքնավարութիւն տալ, այլ միայն ձգտում էր ստանալ հայերի գործուն աջակցութիւնը, որի կարիքը այդ ընթացքում շատ էր զգում:

1916 թ. դեկտեմբերի 28-ին Ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչ ժորժ Պիկօն Պ. Նուպարին առաջարկեց հնարաւորութեան սահմաններում պահանջել միացեալ Հայաստանի ստեղծում Ֆրանսիայի հովանու ներքոյ[22]: Այսպիսով, դերերը փոխուել էին, եւ այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացեալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքոյ: Պ. Նուպարը գիտակցում էր, որ միացեալ երկրի ստեղծումը կապուած է մեծ ջանքերի հետ եւ փորձում էր բաց չթողնել նոյնիսկ ամենափոքր հնարաւորութիւնը: Նա յոյս ունէր, որ Ֆրանսիան, ի տարբերութիւն Ռուսաստանի, որը փոխել էր իր քաղաքականութիւնը Հայաստանի հանդէպ, լինելով առաւել ժողովրդավարական երկիր, ինքնավարութիւն կը տար հայերին:

Պ. Նուպարի այդ լաւատեսութիւնը, մեր կարծիքով, այնքան էլ հիմնաւոր չէր, քանի որ «սոսպետական» Ֆրանսիան, ինչպէս տեսանք, ամէն կերպ խուսափում էր յայտարարել, որ պատերազմից յետոյ իր ազդեցութեան տակ անցնող հայկական տարածքներին ինքնավարութիւն է շնորհելու: Սակայն Ազգային պատուիրակութեան նախագահը ստիպուած էր համակերպուել: Հայ քաղաքական գործիչներին այլ բան չէր մնում, քան համագործակցել այս կամ այն հզօր պետութեան հետ՝ յուսալով, որ նրանք ինչ-որ չափով կը բարելաւեն հայ ժողովրդի վիճակը:

1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնը նոր հեռանկարներ բացեց Հայկական հարցի արդարացի լուծման համար: Ապրիլի 11-ին Կաթողիկոսին ուղարկած նամակում Պ. Նուպարը համոզմունք էր յայտնում, որ Արեւմտեան Հայաստանի ճակատագիրը լուծուելու է առաջին հերթին Ռուսաստանի լիբերալ կառավարութեան կողմից[23]: Պ. Նուպարը կրկին հակուեց Ռուսաստանի միջոցով Հայաստանը ազատագրուած տեսնելու գաղափարին:

© National Library of Armenia

Նա գիտակցում էր, որ Ֆրանսիան համեմատաբար ժողովրդավարական երկիր էր եւ աւելի ընդարձակ ազատութիւններ կարող էր տալ Հայաստանին, սակայն Ֆրանսիան տարածական առումով հեռու էր, իսկ Ռուսաստանը անմիջական հարեւան էր, աւելի մեծ շահեր ունէր տարածաշրջանում, ռուսական զօրքերն էին գրաւել հայկական նահանգները եւ, բնականաբար, այդ տարածքները այլ պետութեան չէր զիջի, ինչպէս նաեւ Կովկասի՝ իր ենթակայութեան հայաբնակ շրջանների հարեւանութեամբ թոյլ չէր տայ, որ այլ պետութեան հովանու ներքոյ ինքնավար Հայաստան ստեղծուի: Ռուսաստանի լիբերալ կառավարութեան հետ կապուած Պ. Նուպարի լաւատեսական յոյսերը շուտով սկսեցին իրականութիւն դառնալ:

1917 թ. ապրիլի 27-ին Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութիւնը ստորագրեց Թրքահայաստանի վերաբերեալ հրամանագիր, որով ռուսական բանակի գրաւած հայկական տարածքները կառավարելու էր ընդհանուր կոմիսարը, որն անմիջապէս ենթարկուելու էր կառավարութեանը[24]: Կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ նշանակուեց Յ. Զաւրեանը, իսկ հայ գաղթականները իրաւունք ստացան վերադառնալ աւերուած օջախները: Իսկ մայիսի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում վարչապետ Ռիբօն յայտարարեց, որ իր երկիրը հրաժարւում է գաղութացման քաղաքականութիւնից[25]: Իրադարձութիւնները կարծես թէ ընթանում էին հայ ժողովրդի շահերին ու ձգտումներին համընթաց:

Այդ պայմաններում Պ. Նուպարը կրկին վերադարձաւ միացեալ եւ ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարին, որից ժամանակին ստիպուած էր եղել հրաժարուել ցարիզմի վարած գաղութային քաղաքականութեան հետեւանքով: Նա միացեալ Հայաստան արտայայտութեան տակ նկատի ունէր Արեւմտեան Հայաստանի վեց նահանգներն ու Կիլիկիան եւ անհրաժեշտ էր համարում երկիրը դնել Անտանտի պետութիւնների ընդհանուր հովանու ներքոյ, իսկ նրանցից մէկը (գերադասելի էր համարում Միացեալ Նահանգները) պէտք է 10-15 տարով ստանձնէր երկրի մանդատը՝ պաշտպանելու արտաքին յարձակումներից եւ աջակցելու քայքայուած տնտեսութեան վերականգնմանը[26]: Այդ ոգով էր խմբագրուած 1917 թ. մայիսի 24-ին Պ. Նուպարի կողմից դաշնակիցներին ուղղուած յուշագիրը՝ «Յուշաթերթ Հայկական հարցի եւ Հայաստանի ազատագրման վերաբերեալ»[27]:

Սակայն 1917 թ. Հոկտեմբերեան յեղափոխութիւնը Ռուսաստանում, 1918 թ. Թրքական բանակի ներխուժումը Արեւմտեան Հայաստան, ապա արշաւանքը դէպի Արեւելեան Հայաստան, ծանր կացութիւն ստեղծեց ոչ միայն Հայկական հարցի արդարացի լուծման համար, այլեւ վտանգեց հայ ժողովրդի գոյութիւնն առհասարակ:

Եւ միայն 1918 թ. Մայիսեան հերոսամարտերն էին, որ Թուրքերին թոյլ չտուեցին աւարտին հասցնել 1915 թ. սկսած ոճրագործ ծրագիրը:

1918 թ. հոկտեմբերին արդէն պարզ էր պատերազմում Թուրքիայի պարտութիւնը, եւ օրակարգում էր նրա կապիտուլյացման հարցը: Հոկտեմբերի 29-ին Պ. Նուպարը դիմեց Անտանտի երկրներին, որպէսզի հայերին ճանաչեն պատերազմող կողմ. «Ազգային Պատուիրակութիւնը կը կարծէ թէ թափուած արիւնը հարիւր հազարաւոր հայերուն, որոնք ջարդուեցան Համաձայնականներու դատին հաւատարիմ մնալու համար եւ մերժած ըլլալնուն համար Թուրքաց կողմէ եղած առաջարկները, որով անոնց կը խոստացուէր անկախութիւն՝ ի վարձատրութիւն Դաշնակիցներու դէմ ըլլալիք աջակցութեան, նաեւ բոլոր զոհողութիւնները, որոնց ենթարկուեցան հայերը կամաւորապէս՝ պայքարելով Ֆրանսայի, Պաղեստինի, Հայաստանի եւ Կովկասի ճակատներուն վրայ, ոչ միայն կ'արդարացնեն իբր պատերազմիկ ազգ ընդունուելու իրենց պահանջը, այլ եւ առ այդ իրենց իրաւունք կու տան»[28],- գրում էր Պ. Նուպարը:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքուեց զինադադարի պայմանագիր[29] Դաշնակիցների եւ պարտուած Թուրքիայի միջեւ: Նոյեմբերին Պ. Նուպարը Ֆրանսիական մամուլին տուած հարցազրոյցում ներկայացրեց այն սկզբունքները, որոնց շնորհիւ պէտք է լուծուէր Հայկական հարցը՝

1. Այլեւս ոչ մի կապ Թուրքական պետութեան հետ,

2. Հայկական պետութիւնը ունենալու է հանրապետական վարչաձեւ եւ դրուելու է ազատարար ազգերի պաշտպանութեան տակ, որոնցից մէկը ստանձնելու է Հայաստանի խնամակալութիւնը մինչեւ այն կազմակերպուի եւ կարողանայ ինքնուրոյն գոյատեւել,

3. Հայաստանի մէջ են մտնելու վեց վիլայէթները եւ Կիլիկիան:

Պ. Նուպարը նշեց ռուսական Հայաստանի նկատմամբ որեւէ պահանջ չունենալու մասին, սակայն եւ յոյս յայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ռուսաստանը, որը յայտարարել է Լեհաստանին ու Ֆինլանդիային անկախութիւն տալու մասին, հայոց հարցում նոյնպէս արդարացի մօտեցում կը ցուցաբերի[30]:

Այդ սկզբունքները Պ. Նուպարը զարգացրեց դեկտեմբերին հրապարակած «Յուշագիր Հայկական հարցի մասին» գրքոյկում[31]: Նա անհրաժեշտ էր դիտում վեց վիլայէթներից, Կիլիկիայից ու Մարաշի սանջակից հայկական պետութեան ստեղծումը, որը, մինչեւ վերջնական կազմակերպուելը, կը դրուէր որեւէ պետութեան խնամակալութեան տակ: Պ. Նուպարը նշում էր, որ այդ պետութեանը հետագայում կը միանայ նաեւ Արարատեան Հանրապետութիւնը, որով եւ Հայաստանը, ըստ էութեան, պատնէշ կը հանդիսանայ պանթուրքիզմի ծաւալումներին:

Հայաստանում հայերի փոքր թուի խնդրի առթիւ նա ցոյց էր տալիս, որ երբ 1821 թ. Յունաստանը անկախութիւն ստացաւ, այնտեղ մնացել էին ընդամէնը 400.000 յոյներ: Իսկ խնդրի բարոյական կողմին անդրադառնալով՝ անհաւանական էր համարում, որ Եւրոպայի ու Ամերիկայի ժողովրդավարները թոյլ կը տան, որ յաղթանակի «Աբդուլ Համիդի, Էնվերի ու Թալէաթի քաղաքականութիւնը»՝ Հայկական հարցը վերացնել բնաջնջելով հայ ժողովրդին[32]:

Ինչպէս ժամանակը ցոյց տուեց, Եւրոպայի ու Ամերիկայի «հայասէր» ղեկավարները չխորշեցին արդարացնել «հայասպանութիւնը» եւ սեփական ճղճիմ շահերի համար սեղմեցին Թուրքերի արիւնոտ ձեռքերը: Մինչդեռ հայ քաղաքական գործիչները անհամբեր սպասում էին Դաշնակիցների մեծահոգի վճռին, քանի որ չէին հաւատում, որ իրեն արդարամիտ ու քաղաքակիրթ համարող արեւմտեան աշխարհի համար հայերի արիւնը աննշան կաթիլ էր լինելու նրանց քաղաքական ու ֆինանսական խարդաւանքների ճանապարհին:

1918 թ. նոյեմբերի 30-ին Պ. Նուպարը ի լուր աշխարհի յայտարարեց «Ամբողջական Հայաստանի» անկախութիւնը: Յայտարարութեան մէջ նշուած էր. «...Հայ ազգը ունի մշակոյթի եւ քաղաքակրթութեան աստիճանը, որ իրեն իրաւունք տայ ինքզինքը կառավարելու: ... Հետեւաբար, համաձայն միակամ փափաքին հանուր Հայ ազգին, որուն մէկ մասը արդէն Անկախ Հանրապետութիւն մը կազմած է, Ազգ. Պատուիրակութիւնը ... կը յայտարարէ Ամբողջական Հայաստանի Անկա-

© National Library of Armenia

խութիւնը Դաշնակից Պետութեանց եւ Միաց. Նահանգներու պաշտպանութեան տակ եւ կամ Ազգերու Դաշնակցութեան՝ անմիջապէս որ ան կազմուի»[33]:

Իսկ "La Voix de l'Arménie" թերթում տպագրած իր յօդուածում Պ. Նուպարը շեշտեց Թուրքա– եւ Ռուսահայաստաններ-ի միաւորմամբ Միացեալ Հայաստանի ստեղծման կենսական անհրաժեշտութիւնը: «Հայաստանը պէտք է ըլլայ մէկ, ամբողջ, ազատ, անկախ,- գրում էր նա,- ա՛յս է ահա Հայ արիւնոտ դատի միակ արդար լուծման միակ հաստատուն գրաւականը»[34]:

Թւում էր՝ մօտ է միասնական անկախ Հայաստանի ստեղծումը, եւ հայ ժողովուրդը կը կարողանայ վերջնականապէս միաւորուել միասնական հայրենիքում, իսկ «ռուսա» եւ «թուրքա» եզրերը, ի վերջոյ, կը պոկուեն Հայաստան անուան վրայից: Պ. Նուպարը անսահման հաւատ ունէր Հայաստանի լուսաւոր ապագայի հանդէպ եւ, ինչպէս տեսանք, առաջինն էր, որ յայտարարեց միասնական հայրենիք ստեղծելու անհրաժեշտութեան մասին՝ ոչ միայն Օսմանեան, այլեւ՝ Ռուսական կայսրութեան հայկական տարածքների միաւորմամբ: Անշուշտ, այդտեղ արտայայտուած էր կորսուած անկախ պետականութիւնը վերականգնուած տեսնելու հայ ժողովրդի դարաւոր ձգտումը, սակայն հայոց ցեղասպանութիւնը անհնարին էր դարձրել սեփական ուժերով ազգային նպատակին հասնելու հեռանկարը, իսկ յոյսը օտարների վրայ դնելուց առաջ պէտք էր ունենալ հմուտ պետական-քաղաքական գործիչների փաղանգ: Սակայն գրեթէ վեցհարիւրամեայ անիշխանական վիճակը թոյլ չէր տուել հայութեանը մշակելու ազգային դիւանագիտական ինքնութեան աւանդոյթներ:

Այսպիսով, Պ. Նուպարը առաջ քաշեց «ծովից ծով» Հայաստանի գաղափարը, որը, նրա կարծիքով, կարող էր իրականութիւն դառնալ Դաշնակիցների եւ առաջին հերթին՝ Միացեալ Նահանգների աջակցութեամբ, քանի որ վերջինս նկատւում էր Հայաստանի մանդատի գլխաւոր թեկնածուն: Միամտութիւն կար, իհա՛րկէ, Պ. Նուպարի՝ մեծ պետութիւնների ազնուութեան ու մարդասիրութեան հանդէպ հաւատի մէջ, քանի որ այդ տէրութիւնների ղեկավարները Ազգային պատուիրակութեանն պարզորոշ արգելեցին մասնակցել Փարիզի հաշտութեան վեհաժողովին, իսկ զինադադարի պայմանագրով Հայաստանը թողեցին Թուրքերի անվերահսկելի «վերահսկողութեան» տակ[35]:

Աւելի համեստ եւ հայ ժողովրդի տուեալ պահի իրատեսական հնարաւորութիւններից բխող պահանջներով էին հանդէս գալիս Հայաստանի Հանրապետութեան վարիչները: ՀՀ կառավարութիւնը Փարիզ ուղարկեց պատուիրակութիւն՝ հասարակական-քաղաքական գործիչ, գրող Աւետիս Ահարոնեանի գլխաւորութեամբ, որի առջեւ խնդիր էր դրուած պահանջել Հայաստանի սահմաններում ընդգրկել Անդրկովկասի հայկական տարածքները, Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբէքիրի, Սեբաստիայի վիլայէթները եւ ելք դէպի Սեւ ծով: Եթէ չյաջողուէր ապահովել այդ սահմանները, ապա պէտք է հրաժարուէին Խարբերդի, Դիարբէքիրի, Սեբաստիայի վիլայէթներից, Գանձակի ու Թիֆլիսի նահանգների որոշ շրջաններից, սակայն ծովային ելքի պահանջը մնում էր առաջնային: Գերադասելի էր համարւում մանդատը յանձնել այնպիսի պետութեան, որը շատ չէր միջամտի երկրի գործերին[36]:

Ինչպէս տեսնում ենք, ՀՀ իշխանութիւնները շրջանցում էին Կիլիկիայի խնդիրը: Դա ունէր մի քանի հիմնաւորում. նախ, Կիլիկիան գտնւում էր Ֆրանսիայի ազդեցութեան գօտում, եւ վերջինս այն դժուար թէ զիջէր Հայաստանին, երկրորդ՝ Եղեռնից արիւնաքամ հայ ժողովուրդը չէր կարող իր ուժերով գրաւել եւ պահել այդ ընդարձակ տարածքները:

Սակայն Ա. Ահարոնեանը, 1919 թ. փետրուարին ժամանելով Փարիզ, համակերպուեց Պ. Նուպարի «ծովից ծով» պահանջներին եւ ՀՀ արտգործնախարարին ուղարկած նամակում դա պատճառաբանեց հետեւեալ կերպ.

1. Բոլոր թրքահայերն ու Պ. Նուպարը առանց Կիլիկիայի Հայաստանն ընկալել չեն կարող եւ չեն էլ ուզի, եւ, եթէ ինքը չհամաձայնի նրանց հետ, ապա պառակտումն անխուսափելի կը դառնայ,

2. Ամերիկան միայն Կիլիկիայի միջոցով կարող էր օգնել Հայաստանին, քանի որ Սեւ ծովի ափին յարմար նաւահանգիստ չկար,

3. Եթէ Կիլիկիան մնայ Ֆրանսիային, ապա վերջինս այն կը կցի Սիրիային եւ բաւական ստուար հայութիւն կը կտրուի հայրենիքից,

4. Հայութեան փրկուած հատուածի մեծ մասը կիլիկիացի կամ սուեդիացի են եւ ոչ մի պայմանով նրանք չեն գնայ խոպան ու աւէր Հայկական լեռնաստանը: Պոլսի, Զմիւռնիայի եւ Եգիպտոսի հայերը նոյնպէս միայն Կիլիկիա կը գնան: Բացի այդ ոչ մի պետութիւն, Կիլիկիայից բացի, ֆինանսական ներդրումներ չի կատարի Հայաստանի այլ վայրերում, ուր ուշադրութեան արժանի ոչինչ չկար[37]:

Պ. Նուպարը եւ Ա. Ահարոնեանը փետրուարի 26-ին Փարիզի վեհաժողովին ներկայացրեցին հայկական պահանջների վերաբերեալ միասնական յուշագիր[38]: Այդտեղ տրուած էր Հայկական հարցի համառօտ պատմութիւնը, հայկական կոտորածները պատերազմի տարիներին, հայերի պայքարը դաշնակիցների կողքին եւ պահանջում էին հայերին ճանաչել կռուող կողմ: Ըստ յուշագրի՝ Հայաստանը ընդգրկելու էր հետեւեալ տարածքները.

1. Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Խարբերդ, Էրզրում, Սեբաստիա եւ Տրապիզոն, առանց Տիգրիսից հարաւ եւ Օրդու-Սեբաստիա գծից արեւմուտք ընկած շրջանների, որոնք բնակեցուած էին հիմնականում մահմեդականներով,

2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Խոզան (Սիս), Ջեբէլ-Բերեքէթ եւ Ադանա՝ Ալեքսանդրէթ նաւահանգստով,

3. Կովկասի Հայկական Հանրապետութեան տարածքը. Երեւանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Գանձակի նահանգի հարաւ-արեւմտեան մասը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանից հիւսիս ընկած շրջանի:

Նշւում էր, որ չպէտք է հաշուի առնել ցեղասպանութեան հետեւանքով հայերի թուի նուազումը Հայաստանում: «Անթոյլատրելի է, որ ոճիրներից օգուտ քաղեն նրանց հեղինակները եւ նրանք հասնեն իրենց հրեշաւոր ծրագրի նպատակին - ապահովել մահմեդականների մեծամասնութիւնն ու գերակայութիւնը»[39]: Մատնանշւում էր, որ բացի բարոյականից կայ նաեւ գործնական կողմ. «Հայերը միակ տարրն են, որ ի վիճակի են այժմ քաղաքակրթութեան եւ պրոգրեսի ընդունակ մի պետութիւն կազմելու»[40]: Խոստանում էին Հայկական պետութեան մէջ ազատութիւններ տալ ազգային փոքրամասնութիւններին: Անհրաժեշտ էր համարւում որեւէ պետութեան աջակցութիւնը երկրի կազմակերպման, տնտեսական ու ֆինանսական վերականգնման գործում: Սակայն այդ օժանդակութիւնը չպէտք է ստանար պրոտեկտորատի կերպարանք, եւ մանդատը տրուելու էր առաւելագոյնը 20 տարով: Նաեւ պահանջւում էր վնասների հատուցում Թուրքիայից:

Ինչպէս տեսնում ենք, հայ գործիչները ձգտում էին ստեղծել միասնական հայկական պետութիւն, որի մէջ չէին ներառուելու այլադաւաններով ու այլազգինե-

© National Library of Armenia

րով բնակեցուած շրջանները եւ յարգուելու էին ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները: Իսկ երկրի հովանաւորութիւնը այլ պետութեան էր յանձնուելու ժամանակաւորապէս՝ տնտեսապէս քայքայուած երկրին օգնելու եւ արտաքին յարձակումներից պաշտպանելու համար:

Այսպիսով, 1912 թ. առաջ քաշուող պարզ բարենորոգումների խնդրից 1915 թ. Հայկական հարցը դարձաւ ինքնավարութեան պահանջ, իսկ պատերազմում Թուրքիայի պարտութիւնը առաջնահերթ դարձրեց միացեալ եւ անկախ Հայաստան ստեղծելու հրամայականը:

Հայկական կողմը գերադասում էր ԱՄՆ հովանաւորութիւնը, քանի որ այդ երկիրը յայտնի էր ժողովրդավարական կայուն սկզբունքներով, մինչ այդ շատ չէր միջամտել Ասիայի ու Եւրոպայի երկրների ներքին գործերին, ինչպէս նաեւ Հայաստանից հեռու էր, եւ փոքր էր վերջինս գաղութացնելու գայթակղութիւնը:

1919 թ. ապրիլի 17-ին Պ. Նուպարն ու Ա. Ահարոնեանը հանդիպեցին Միացեալ Նահանգների նախագահ Վուդրօ Ուիլսոնի հետ: Վերջինս նշեց, որ եթէ Ամերիկան որեւէ մանդատ վերցնի, ապա դա կը լինի Հայաստանինը, քանի որ հայերը մեծ համակրանք են վայելում իր երկրում: Նախագահը խոստացաւ նաեւ, որ ապագայ Հայաստանի սահմանները կը լինեն մօտաւորապէս հայկական կողմի պահանջներին համապատասխան[41]:

Սակայն տէրութիւնները ոչ միայն խոստումներից այն կողմ չանցան, այլեւ հայկական պահանջները խիստ ընդդիմութեան հանդիպեցին Ֆրանսիայի կողմից, որը ձգտում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Այստեղ պէտք է նշել նաեւ հայկական կողմի մեղքը, որը չկարողացաւ լեզու գտնել Ֆրանսիացիների հետ, որոնք հայերի հանդէպ բաւական բարեացակամ էին Կիլիկիան գրաւելու առաջին ամիսներին: Դա պայմանաւորուած էր նաեւ այն հանգամանքով, որ Կիլիկիան պահող ուժը սկզբնական շրջանում Հայկական լեգէոնն էր: Սակայն հայ-ֆրանսիական յարաբերութիւնները հետզհետէ վատթարացան, ինչը բացասաբար ազդեց Հայկական հարցի վրայ:

Փարիզի հաշտութեան վեհաժողովում պարզ դարձաւ, որ տէրութիւնները Հայկական հարցում ցաւակցութիւններից ու խոստումներից այն կողմ անցնելու մտադրութիւն չունեն: Նրանք ո՛չ զինուոր, ո՛չ էլ դրամ էին նախատեսում հայ ժողովրդի ձգտումները եւ պատերազմի տարիներին տուած խոստումները իրականացնելու համար: Ի վերջոյ, հասկանալով տէրութիւնների դիւանագիտական խարդաւանքների էութիւնը, հայ պատուիրակները ստիպուած էին չափաւորել իրենց պահանջները:

1920 թ. փետրուարին Լոնդոնի կոնֆերանսում Պ. Նուպարն ու Ա. Ահարոնեանը արդէն չէին պահանջում Կիլիկիան, այլ բաւարարւում էին միայն այդ երկրամասի համար ինքնավարութեան հեռանկարով՝ Ֆրանսիայի հովանու ներքոյ[42]:

Այժմ հայ պատուիրակների համար պարզ էր Կիլիկիան Հայաստանին միացնելու ձգտումների անհնար լինելը եւ ձգտում էին այն թողնել թէկուզ Ֆրանսիայի հովանու ներքոյ, բայց արդէն ուշ էր:

1920 թ. մարտի 16-ին Սահմանագծման յանձնաժողովը հայկական կողմին տեղեկացրեց, որ Հայաստանը դրուելու է Ազգերի լիգայի հովանու տակ, քանի որ ոչ մի պետութիւն չէր համաձայնել վերցնել մանդատը, իսկ հայերը պէտք է բաւարարուէին՝ Հայաստանի Հանրապետութեանը կցելով Վանը, Բիթլիսը, Մուշը եւ Էրզրումը՝ առանց հասնելու Երզնկային:

Սակայն ապրիլի 18-24-ը Սան Ռէմոյի խորհրդաժողովում Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջն ու Իտալիայի վարչապետ

Ֆրանչեսկո Նիտտին կասկածի տակ դրեցին նաեւ Էրզրումի՝ Հայաստանին միացնելու հաւանականութիւնը: Պ. Նուպարը եւ Ա. Ահարոնեանը մեծ ջանքեր գործադրեցին, որպէսզի համոզեն Էրզրումը տալ Հայաստանին: Ի վերջոյ, ապրիլի 24-ին տէրութիւնների ղեկավարները որոշեցին Հայաստանի մանդատը առաջարկել Ամերիկային, իսկ չվերցնելու դէպքում ԱՄՆ-ի նախագահին էին թողնում Հայաստանի սահմանների գծումը՝ Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի եւ Վանի վիլայէթների սահմաններում:

Դրանով տէրութիւնները իրենց ձեռքերը լուացին եւ Հայաստանի սահմանագծումը յանձնեցին Ուիլսոնին՝ քաջ գիտակցելով, որ հայերը սեփական ուժերով նոյնիսկ Հայաստանի Հանրապետութեան սահմանները չեն կարող պաշտպանել օրէցօր հզօրացող քեմալական Թուրքիայի յարձակումից, որի ռազմական յաջողութիւնները պայմանաւորուած էին Դաշնակիցների «անփութութեամբ», քանի որ պատերազմում պարտուելուց յետոյ Թուրքերը ինչ-ինչ նկատառումներով չզինաթափուեցին:

Հետագայում Լ. Ջորջը քննադատեց Սան Ռէմոյում «Պօղոսի կախարդական հեքիաթները» եւ Ահարոնեանի «կոյր լաւատեսութիւնը»[43]: «Դժուար էր պատկերացնել հայկական դիրքերի անյուսալիութեան եւ անհոգ անփութութեան աւելի վառ ապացոյց,- գրում է Լ. Ջորջը,- քան այն, թէ ինչպիսի յայտարարութիւններով էին հանդէս գալիս վերին աստիճանի տաղանդաւոր այդ ժողովրդի ականաւոր ներկայացուցիչները, որոնցից կախուած էր նրա ապագան՝ որպէս անկախ ազգ»[44]: Գուցէ եւ ճիշտ էր Լ. Ջորջը, երբ քննադատում էր Պ. Նուպարի ու Ա. Ահարոնեանի վարած քաղաքականութիւնը, սակայն մոռանում էր մի պարզ փաստ, որ հայ գործիչները ծանօթ չէին Եւրոպայի երկերեսանիութեանն ու ապերախտութեանը, չէին հաւատում, որ իրենց ժողովրդավար կոչողները կարող են սեղմել թուրքերի արիւնոտ ձեռքը եւ կը մոռանային իրենց փոքր դաշնակցին, որն աւելի շատ արիւն էր թափել պատերազմում, քան եւրոպական մեծ տէրութիւնները:

Պ. Նուպարը դեռ յոյս ունէր, որ Ամերիկայի նախագահի պատասխանը չի ուշանայ մանդատը վերցնելու հարցում, եւ այն «նպաստաւոր պիտի ըլլայ»[45]: Չնայած Ուիլսոնը կողմնակից էր Հայաստանի մանդատը վերցնելուն, սակայն նա մեծամասնութիւն չունէր Կոնգրեսում եւ Սենատում: 1920 թ. յունիսի 1-ին ամերիկեան Սենատը 52 կողմ, 23 դէմ ձայներով բանաձեւ ընդունեց Հայաստանի մանդատը մերժելու մասին[46]: Այսպիսով, Ամերիկայի հետ հայերի կապած յոյսերը յօդս ցնդեցին:

Պ. Նուպարը 1920 թ. մայիսի 6-ին հանդիպեց Ֆրանսիայի վարչապետ Միլերանի, իսկ մայիսի 10-ին՝ նախագահ Դեշանէլի հետ: Այդ հանդիպումներից պարզ դարձաւ, որ Ֆրանսիան Կիլիկիան յանձնելու էր Թուրքերին, իսկ ՀՀ-ին սպառնացող բոլշեւիկեան վտանգի դէմ ոչինչ չէր ձեռնարկի[47]: Այսպիսով, նոյնիսկ Ֆրանսիայի հովանու ներքոյ Կիլիկիան պահելու երազանքն էր յօդս ցնդում: Այն բոլոր յոյսերը, որ հայերին համակել էին պատերազմի աւարտից յետոյ, վերափոխւում էին յուսահատութեան ու տագնապի:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սեւր արուարձանում յաշտութեան պայմանագիր կնքուեց Դաշնակից պետութիւնների եւ Օսմանեան կայսրութեան միջեւ: Պայմանագիր, որին հայ ժողովուրդը սպասում էր պատերազմում Թուրքիայի պարտութիւնից ու զինադադարի կնքումից ի վեր, այսինքն՝ մէկուկէս տարի: Այդ պայմանագրի հետ էր կապուած հայութեան երազանքների իրականացումը: Այն

© National Library of Armenia

ստորագրեց նաեւ ՀՀ պատուիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանը: Ըստ դրա՝ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանագիծը որոշելու էր ԱՄՆ նախագահ Ուիլսոնը, եւ այն անցնելու էր Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի վիլայէթներով[48]*:*

Սակայն այդ պայմանագիրն արդէն ուշացած էր, եւ այն իրականութիւն դարձնելու հնարաւորութիւններ չկային, քանի որ դաշնակիցների դանդաղկոտութեան հետեւանքով Թուրքիայում սկսուել եւ մեծ թափ էր ստացել քեմալական շարժումը: Ուինստոն Չերչիլը Սեւրի պայմանագրի մասին հետագայում նշում էր. «13 ամիս նախապատրաստուող այդ փաստաթուղթը հնացաւ աւելի շուտ, քան պատրաստ էր»[49]*:*

Հայերը պայմանագիրը ընդհանուր առմամբ խանդավառութեամբ ընդունեցին, քանի որ դրանով Հայաստանին տրւում էին հետագայ զարգացման համար անհրաժեշտ կենսատարածքներ եւ ելք դէպի ծով: Միաժամանակ հայկական ընդարձակ տարածքներ մնացին Թուրքերին, այդ թւում՝ Կիլիկիան, ուր վերադարձել եւ նոր կեանք էին սկսել տասնեակ հազարաւոր հայեր՝ հաւատալով Ֆրանսիայի խոստումներին: Բացի այդ, պարզ չէր, թէ ինչպէս պէտք է քեմալականներից ազատագրուէին հայկական տարածքները:

Օգոստոսի 14-ին Պ. Նուպարը նոտա յղեց Խաղաղութեան վեհաժողովի նախագահ Միլերանին[50]*: Նա բողոքեց Կիլիկիան եւ Խարբերդը Թուրքերին թողնելու առթիւ, պահանջեց այդ տարածքները յանձնել Ֆրանսիայի հովանաւորութեանը եւ նշեց, որ Հայ ազգային պատուիրակութիւնը չի դադարելու պահանջել այդ տարածքները: Սակայն Պ. Նուպարի բողոքի նոտան, բնականաբար, անուշադրութեան մատնուեց, քանի որ երկու տարուայ քննարկումներից յետոյ, եթէ տէրութիւնները որոշել էին Կիլիկիան թողնել Թուրքերին, ապա պայմանագրի ստորագրումից մի քանի օր յետոյ չէին փոխի իրենց քաղաքականութիւնը:*

1920 թ. դեկտեմբերի 1-ին Պ. Նուպարը «Կիլիկիայի հարցի ներկայ վիճակը» վերնագրով յուշագիր ներկայացրեց Ֆրանսիական կառավարութեանը: Նա առաջարկում էր Կիլիկիայում ստեղծել ինքնավար քրիստոնեայ վարչութիւն՝ Ֆրանսիայի հովանու ներքոյ եւ խառը ոստիկանութիւն՝ Ֆրանսիացի սպաների հրամանատարութեան ներքոյ: Ըստ նրա՝ այդ լուծումը չէր հակասի Սեւրի դաշնագրին, կը պահպանէր Ֆրանսիական շահերը երկրամասում, մարդկային եւ նիւթական նոր յատկացումներ չէին պահանջուի, ինչպէս նաեւ հնարաւորութիւն կը տար խաղաղութիւն պահպանել Սիրիայի հիւսիսում: Նա շեշտում էր, որ միայն Կիլիկիայում աւելի մեծ տնտեսական շահեր կային, քան Ֆրանսիային անցած միւս երկրամասերում միասին վերցրած[51]*:*

Ի միջի այլոց, այդ ծրագիրը բաւական իրատեսական էր, սակայն Ֆրանսիան արդէն փորձում էր մերձեցում ստեղծել քեմալական Թուրքիայի հետ եւ ապահովել իր տնտեսական շահերը, ինչի հետեւանքով զոհաբերեց հայկական Կիլիկիան:

Կիլիկիայում ինքնավարութիւն ստանալու քաղաքականութիւնը խրախուսում էին նաեւ անգլիացի որոշ քաղաքագէտներ, որոնք անյոյս էին համարում Արեւմտեան Հայաստանի ազատագրումը եւ, նոյնիսկ, մինչեւ Սեւրի պայմանագիրը Ազգային պատուիրակութեանը խորհուրդ էին տալիս հայութեան բեկորները համախմբել Կիլիկիայում եւ Ֆրանսիական մանդատի ներքոյ կազմել «ազգային բոյն մը»[52]*:*

1921 թ. փետրուարի 17-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարութիւնում կազմուած մի փաստաթղթում նոյնպէս նախատեսւում էր Հայաստանին յանձնել միայն մինչեւ 1914 թ. ռուս-թուրքական սահմանները, իսկ արեւմտահայերին տեղաւորել Կիլիկիայում, ուր պէտք է ինքնավարութիւն տրուէր հայերին՝ Թուրքիայի գերիշխանութեան եւ Ազգերի լիգայի հովանու ներքոյ[53]*:*

1921 թ. փետրուարի 26-ին Պ. Նուպարն ու Ա. Ահարոնեանը ներկայացան Լոնդոնի խորհրդաժողովին[54]*: Հայ պատուիրակները պահանջեցին Սեւրի համաձայնագրի դրոյթները պահպանել, իսկ Կիլիկիային ինքնավարութիւն չնորհել:*

Ինչպէս տեսնում ենք, հայ պատուիրակները շարունակեցին պահանջել Սեւրի պայմանագրի գործադրութիւնը Հայաստանի համար: Դա քաղաքական ռոմանտիզմի վառ դրսեւորում էր: Նոյնիսկ 1920 թ. ապրիլին Սան Ռէմոյում անհնար էր համարւում այդ տարածքները գրաւել Թուրքերից, իսկ հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտութիւնից յետոյ դրա մասին մտածելն անգամ անմտութիւն էր: Յոյսը դաշնակիցների ռազմական եւ նիւթական աջակցութեան վրայ դնել հայ պատուիրակները չէին կարող, քանի որ տէրութիւնները վաղուց էին հրաժարուել Հայաստանին զինուոր կամ դրամ տրամադրելուց:

Մարտի 4-ին Լոնդոնի խորհրդաժողովը որոշեց փոփոխութիւններ մտցնել Սեւրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասում, եւ Թուրքիային առաջարկեցին իր արեւելեան տարածքների վրայ կազմել հայկական «Ազգային տուն», որի սահմանները որոշելու էր Ազգերի լիգայի կազմած յանձնաժողովը[55]*: «Լոնտոնի մէջ Հայերուն տրուելիք «Ազգային Տուն»ը կու գար քանդելու Սեւրի մէջ տրուած «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի օգակառոյց շէնքը»*[56]*,- գրում է ռամկավար գործիչ Ա. Դարբինեանը: Իսկ պատմաբան Գալուստ Գալոյեանը նշում է. «Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովը, ըստ էութեան, չեղեալ յայտարարեց Սեւրի պայմանագիրը, չնայած այն իր պաշտօնական ձեւակերպումը գտաւ միայն Լոզանի խորհրդաժողովում: Դա այն վարձն էր, որ տրւում էր քեմալականներին բոլշեւիկեան Ռուսաստանի դէմ պայքարելու համար, որից տուժեցին նաեւ հէնց իրենք՝ դաշնակիցները»*[57]*:*

Այսպիսով, դաշնակիցները միացեալ Հայաստանի փոխարէն Լոնդոնում առաջարկեցին Ազգային տուն կամ օջախ՝ Թուրքիայի «արեւելեան վիլայէթներում»: Սակայն այդ չափազանց համեստ ծրագիրը եւս մնաց թղթի վրայ՝ Թուրքերի սուր ընդդիմութեան հետեւանքով: Իսկ 1921 թ. աշնանը Ֆրանսիան Թուրքիային յանձնեց Կիլիկիան, եւ տեղի հայերը ստիպուած էին կրկին վերցնել գաղթականի ցուպը:

Պ. Նուպարը իր 7-8 տարիների ազգային գործունէութիւնից յետոյ մեծ ցաւով ու հիասթափութիւններով 1921 թ. աշնանից հեռացաւ իր պաշտօնից: 1930 թ. յունիսի 18-ին արդէն մահուան մահճում գտնուող Պ. Նուպարը իր վերջին խօսքն ուղղեց հայ ժողովրդին, ուր անդրադարձաւ նաեւ Ազգային պատուիրակութեան նախագահի պաշտօնում իր գործունէութեանը. «Ձեզի ծանօթ են այն դեղեցիկ հեռապատկերները, որ կը գծուէին մեր աչքերուն առջեւ, այն ամենածանր զոհողութիւններէն ետք, զոր ժողովուրդ մը երբեւիցէ ըրած է իր ազատութեան համար: Աւա՜ղ, գիտէի նաեւ այն ահաւոր յուսախաբութիւնները, զոր արդարութեան վճռումի պահուն, մեր մեծ դաշնակիցներուն եսասիրութիւնն ու ապերախտութիւնը վերապահեցին մեզի իբրեւ միակ վարձքը մեր հաւատարմութեան: Այդ աղետալի օրէն ի վեր, իմ ճզմուած սիրտս իր վէրքերով միայն ապրեցաւ»[58]*:*

Ինչպէս տեսանք, Պ. Նուպարը Հայկական հարցի ասպարէզ մտաւ 1912 թուականից եւ մինչեւ 1921 թ. յամառօրէն

© National Library of Armenia

պայքարեց Հայութեան շահերի պաշտպանութեան համար: Սկզբնական փուլում (բարենորոգումների շրջան) նա հանդէս էր գալիս ամենահամեստ պահանջներով, սակայն 1915-ից որդեգրեց միացեալ եւ «ծովից ծով» Հայաստանի գեղեցիկ, բայց անիրականանալի քաղաքականութիւնը:

Պէտք է նշել, որ Հայկական հարցի վրայ բացասաբար էին ազդում նաեւ Պ. Նուպարի վատ յարաբերութիւնները Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների եւ Ա. Ահարոնեանի հետ, ինչը հնարաւորութիւն չէր տալիս աւելի սերտ համագործակցել, չնայած դրական էր այն, որ օտար պետութիւնների առջեւ միասնական յուշագրերով, դիմումներով ու պահանջներով էին հանդէս գալիս:

1912-1921 թթ. հայ ժողովրդի պատմութեան ամենավճռական փուլերից էին: Ժամանակաշրջան, որի ընթացքում մեր ժողովուրդը ենթարկուեց ամենադաժան փորձութիւնների ու կանգնեց ամենադողեցիկ երազանքները իրականացած տեսնելու տեսլականի առջեւ: Այդ ամէնի բովով անցաւ նաեւ Ազգային պատուիրակութեան նախագահ, ազգային մեծ բարերար Պօղոս Նուպար փաշան: Նրա գործունէութիւնը այդ տարիներին անմնացորդ նուիրում էր հարազատ ժողովրդին ու հայրենիքին: Եւ ինչպէս հայ ժողովուրդը, նա նոյնպէս ապրեց բոլոր հիասթափութիւններն ու դառնութիւնները, որոնցով լեցուն էին այդ տարիները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 27, թերթ 1-2:
2 **Ե. Օտեան,** *Պօղոս փաշա Նուպար,* Կ.Պոլիս, 1913, էջ 4:
3 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում* (1828-1923), խմբագիր **Զ. Կիրակոսեան,** Երեւան, 1972, էջ 128:
4 Նոյն տեղում, էջ 130-148:
5 **Ե. Օտեան,** անդ, էջ 63:
6 **Վ. Մալէզեան,** *Ճամբուս վրայ,* Փարիզ, 1950, էջ 309:
7 Ապահովութեան խորհուրդը կազմաւորուեց 1912 թ. դեկտեմբերին եւ գործում էր Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի նախագահութեամբ: Նրա նպատակն էր համակարգուած ձեւով հետապնդել եւ իրագործել Հայկական բարենորոգումների խնդիրը:
8 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 33, թ. 35:
9 **Լէո,** *Հայոց հարցի վաւերագրերը,* Թիֆլիս, 1915, էջ 314-329:
10 Ժողովածոյ դիպլոմատիքական դոկումենտների: *Բարենորոգումները Հայաստանում 1912 թ. նոյեմբեր 12-ից մինչեւ 10 մայիս 1914 թ.,* թարգմ. **Ս. Աւագեան,** Թիֆլիս, 1915, էջ 102-104:
11 «Արարատ» ամսագիր, Ս. Էջմիածին, 1914, օգոստոս, էջ 697-706:
12 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 28, թ. 108:
13 Նոյն տեղում, գ. 58, թ. 64-65:
14 *Геноцид армян в Османской империи.* Сборник документов и материалов под редакцией **М. Г. Нерсисяна.** Ереван, 1983, ст. 275-276.
15 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան ... փաստաթղթերում,* էջ 372:
16 *Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents.* Edited and translated by **Vatche Ghazarian.** Waltham, 1996, p. 3-5.
17 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 28, թ. 161-162:
18 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 27, թ. 30-31:
19 *Boghos Nubar's Papers,* p. 80-84.
20 ՀԱԱ, ֆ. 430, g. 1, գ. 26, թ. 9:
21 *Boghos Nubar's Papers,* p. 372-374.
22 Նոյն տեղում, էջ 422-424:
23 Նոյն տեղում, էջ 432-433:
24 **Ս. Վրացեան,** *Հայաստանի Հանրապետութիւն,* Երեւան, 1993, էջ 26-27:
25 *Boghos Nubar's Papers,* p. 437.
26 Նոյն տեղում, էջ 438:
27 ՀԱԱ, ֆ. 430, g. 1, գ. 26, թ. 14-15: Նաեւ՝ **Վ. Մելիքեան,** *Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութիւնը եւ Հայկական հարցը 1917 թ.,*- ՊԲՀ, 1994, թիւ 1-2, էջ 130:
28 **Լ. Ահէմեան,** *Եգիպտահայ տարեցոյց 1925,* Ալեքսանդրիա, 1924, էջ 87:
29 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան ... փաստաթղթերում,* էջ 537-539:
30 «Վերածնունդ», Փարիզ, 14 նոյեմբեր, 1918, թիւ 21-22: «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 6 յունուար, 1919, թիւ 43:
31 *Memorandum on The Armenian Question.* Presented by the Armenian National Delegation. Paris. 1918.
32 Նոյն տեղում, էջ 7-8:

33 ՀԱԱ, ֆ. 282, g. 1, գ. 46, թ. 1: Նաեւ՝ **Լ. Ահէմեան,** *Եգիպտահայ տարեցոյց 1925,* էջ 89-91:
34 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, յունուար, 1919, թիւ 40:
35 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան ... փաստաթղթերում,* էջ 537-539:
36 ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, թ. 10-12:
37 Նոյն տեղում, թ. 154-155: Նոյն տեղում, g. 2, գ. 47, թ. 2-3:
38 *Հայկական հարցը Հաշտութեան կոնֆերանսի առաջ,* Թիֆլիս, 1919:
39 Նոյն տեղում, էջ 7:
40 Նոյն տեղում:
41 ՀԱԱ, Ֆ. 200, g. 2, գ. 49, թ. 1: Նաեւ՝ **Ա. Ահարոնեան,** *Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան,* Երեւան, 2001, էջ 23-24:
42 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 215, թ. 1-2: Նաեւ՝ **Ա. Ահարոնեան,** նշ. աշխ., էջ 59-63:
43 **Ллойд Джордж,** *Правда о мирных доховорах,* т. 2, Москва, 1957, ст.433-438.
44 Նոյն տեղում., էջ 437:
45 ՀԱԱ, ֆ. 174, g. 1, գ. 1, թ. 1:
46 **Ա. Եսայեան,** *«Հայկական հարցը» եւ միջազգային դիւանագիտութիւնը,* Երեւան, 1965, էջ 194:
47 **Զաւէն Արք. Եղիայեան,** *Պատրիարքական յուշերս,* Գահիրէ, 1947, էջ 340-342:
48 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան ... փաստաթղթերում,* էջ 676-677:
49 **Черчиль У.,** *Мировой кризис,* М—Л., 1932, стр. 258.:
50 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 224, թ. 12: Նաեւ՝ «Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն, 1920, հոկտեմբեր 6, թիւ 2566:
51 ՀԱԱ, ֆ. 412, g. 1, գ. 2206, թ. 1-5:
52 ՀԱԱ, ֆ. 282, g. 1, գ. 54, թ. 2:
53 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան ... փաստաթղթերում,* էջ 696:
54 Նոյն տեղում, էջ 697-704:
55 **Ա. Դարբինեան,** *Հայ ազատագրական շարժման օրերէն,* Փարիզ, 1947, էջ 479-480:
56 Նոյն տեղում, էջ 480:
57 **Գ. Գալոյեան,** *Հայաստանը եւ մեծ տէրութիւնները 1917-1923 թթ.,* Երեւան, 1999, էջ 435:
58 *Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան 1906-1931,* Փարիզ, 1935, էջ 12:

© National Library of Armenia